

ցին՝ թէ սիրով՝ թէ հարկիւ թէ կամայ՝ և ակամայ՝ Եւ բայց յայսցանէ՝ ի յերկուս ամիսս ի մէջ զօրացն մնալով վասն հաշտութեան և զերեւացն աղատման (որ և ազատեաց իսկ բազումն ի հայոց և ի տաճկաց) յոյժ վշտացաւ ի ցրտոյ և ի յանձրեոյ և եզիտ զմեծ իմն հիւանդութիւնս՝ ունելով և զվերորդեալ մտատանջութիւնսն և զցաւսն ալ ոչ կարաց զերծանիլ ի հիւանդութենէն։ Այլ ի ՌՄԻԴԹ Թուոյ նոյեմբերէն մինչև ի ՌՄԻԹ Թուոյ Յուլիսի ԻԶ, եկաց այնու հիւանդութեամբ իսկ ի ԻԶ օրն Յուլիսի՝ որ էր վարդապետի կիւրակէն փոխեցաւ առ Զրիստոս յոյսն ամենեցուն՝ բարի և երջանիկ մահուամբ սրբանեալ և երջանիկ տէրն մեր և Աստուածարեալ Հայրապետն բարեջան՝ Տէր Սիմէօն սրբազան կաթողիկոսն և ի յերկուշաբթ օրն՝ թաղեցաւ ի ձախակողման գաւթի սրբոյ վանիցն Գայիանէի սրբուհոյ կուսին։ Հուպ տեառն Արրահամու սրբազան կաթողիկոսին Մշեցոյ։ Եւ զհամայն երկամբ ծնեալ զաւակունս իւր հոգեւորս՝ եթող յորրութեան և ի սուգ անմիտութար՝ որոյ զհոգին լուսաւորեցեալ տէր՝ և հանգուցեալ այցելութեամբ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ։ Դասելով ընդ ճշմարիտ Հայրապետացն սրբոց։ Իսկ՝ մինչ ետես լուսահոգին զինքն մերձեւ ի վախճան։ Հոգացաւ վասն սրբոյ Աթոռոյս զհոգ մեծ։ Զի տակաւին յաւերութեան և ի մեծի խաղութեան կայր երկիրս և զոյր երկիւղ վերատին գալոյ վրաց արքային յայս երկիր։ Վասն որոյ մտածեաց։ զի թէ անտէր մնացեալ Աթոռս սուրբ։ զիպելոցէ մնասուց մեծաց։ Եւ զի ի յայսմ ներկայի եպիսկոպոսաց ընտրելին՝ և արդարեւ արժանաւորն գերազունի աստիճանին Հայրապետութեան էր աստի պատրաստի որ էր տէր Տէր Դուկաս Արքեպիսկոպոսն Կարնեցի։ Ընդ միաբան սրբոյ Աթոռոյս որ էր շնորհածին և անդրանիկ որդի սիրելի՝ հոգելոյս տեառն մերոյ որ ի նուիրակութենէն և յերկոտասան ամեայ առաջնորդութենէն Զմիւռնոյ եկեալ աստ՝ կայր առ հոգելոյս տէրն մեր ի մեծի պատուի և յարգութեան։ Վասն որոյ կտակեաց վասն նորա՝ զի յետ վախճանին իւրոյ փութապէս նստուցն զնա յաթոռ Հայրապետութեան։ զի մի

մնացեալ Աթոռս սուրբ ի յանտիրութեան։ Որում հաւանեալ միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացոցս ընտրեցին զգերերջանիկ Արքեպիսկոպոսն Տէր Դուկաս ի կաթողիկոսութիւն տանս Հայոց։ Որոց և յոյժ երկուցեալ ի յասացեալ երկիւղիցն թէ գուցէ վաղվադակի լինիցին ի յառաջիկայ երկրորդ կիւրակէն։ որ էր օգոստոսի Բ. և եթնեւորդ օր թաղման լուսահոգոյն օծին զնորոգ ընտրեցեալն ի հոգեւոր սրբոյ՝ զՏէր Դուկաս մաքրակեցաղ և սրբազան կաթողիկոսն։ Որում տացեալ տէր զկեանս երկարս և խաղաղականս ապահով առնելով յամենայն հոգեկան և մարմնական փորձութեանց։ Իսկ ապա՝ ի յաւուրս նորոգ Հայրապետութեան վերոյ յիշեցելոյ վեհիս մերոյ սրբազանի լրացուցեալ զամենայն պակասութիւնս սոցին։ կազմել ետու զսոյն երկոսին վաստակքս ձեռաց իմոց՝ ես Եփրեմ՝ ընտրեալիս վարդապետս և ընծայեցի սոցնոյ Աստուածընտիր և նորոգ Հայրապետիս մերոյ սրբազանի զի զվայելելին սրբազան ծնողին իւրոյ Հոգեծնի՝ ինքն շնորհածին և անդրանիկ որդի նորին վայելեցեալ բարեաւ և յիշեցեալ զնա ի յարժանահայց յաղօթս իւր առ տէր՝ առնել արժանի իւրոյ զթութեանն և ողորմութեանն և զթարմատար վաստակողքս ի սմա ևս՝ յիշելով առ տէր։ Յորմէ և ինքն յիշեցի ի բիւրապատիկ բարութիւնս յերկակի կեանս իւր։ հանդերձ հոգեւոր և մարմնաւոր ծնողք իւրովք՝ և համայն իւրայնովք ի վառս Ամենասրբոյ Ծրբորդութեանն չօր և Ուրբոյ և չոգոյն սրբոյ որ է օրհնեալ յաւիտեանս։ Ամէն։



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿՍԹՈՒՆԻ ԵԿԵՂԵՅՈՒ

— Լեւոն ԺԳ. պապի Զանքերն իտալացի գերիններն հարեշներ թագաւորի ձեռքից աղատելու համար ի գերեւ ելան։ Վատիկանի բերան „Observatore Romano“-ն հրատարակեց պապի նամակն առ Մենելք և նրա պատասխանը։ Նեգուսի նամակից երևում է, որ կամեցել է կատարել պապի քրիստոնէական պահանջը։ բայց վախճանով որ իտալա-

կան կառավարութիւնը խաղաղութեան պայմանները կը գծուարացնէի, չէ կատարել:

Արդէն իսկ հեռագիրն հաղորդեց, որ հոկտեմբերին սկզբին խաղաղութեան դաշն է կոուել Իտալիոյ և Հարէշտանի մէջ. այս նուագ ևս պակին չը յաջողուեց գրգռել խաղաղներին ընդդէմ կառավարութեան: Նեգուսի հետ բանագնացութեան համար պակը ծախսել է 60,000 ֆրանկ:

— Հոռովմում վախճանուեց ծիրանաւորների աւագագոյնը գերերջանիկ Գուստաւ Ազոլֆ Հոհենլոհէն: Հոհենլոհէն իւր ծագմամբ պատկանում է եւրոպական առաջնակարգ ազնուականութեան, նա սերուում է Աոնրադ Ա. կայսեր եղբորից, Հանգուցեալ ծիրանաւորի եղբայրն այժմ գերմանական կայսերութեան նախարարագետն է: Հոհենլոհէն ազգեցիկ ծիրանաւորներիցն էր և իւր ժամանակին մեծ գեր է խաղացել, վերջերս նա յայտնի էր Հռովմում իւր առատածնուն բարեգործութիւններով: Հոկտեմբերի 15-ին կատարուել է Հոհենլոհէի թաղումն Հոռովմում:

— Պապականները չեն դադարում պապի աշխարհական իշխանութեան վերականգման մասին մտածելուց. ամեն մի կաթողիկ ժողովում, բոլոր կաթողիկ հասարակութիւնների և կաթողիկական մամուլի մէջ շարունակ յեղցեղում է այդ խնդիրը: Հատ հետաքրքրական է այն միտքը, որ վերջերս յղացել են կաթողիկները, աչքի առաջ ունենալով իտալական կառավարութեան նեղ վիճակը, առաջարկութիւն է լինում բոլոր կաթողիկ աշխարհում ժողովարարութիւն անել և երկու միլիարդ ռուբլի ժողովելով գնել Հոռովմը իտալական կառավարութիւնից և պարգեւել պապին: Ինչքան էլ գծուար լինի այդ մեծ գումարը ժողովելն, այսու ամենայնիւ կաթողիկ կղերը կը ժողովէ այդ խնդիրն այն է, որ իտալական կառավարութիւնը համաձայնի որ և է գնով իւր մայրաքաղաքը վաճառելու:

— Ռուսաց եկեղեցական թերթերի իւրաքանչիւր համարը լիքն է բողոքներով ընդդէմ Գալիացիայում բնակող ռուսների վերաբերութեամբ գործ գրուող պապական և լեհական հալածանքներին: Այդ բողոքներից երևում է, որ յիսուսեանները խլում են կաթողիկաց եկեղեցու հետ միաբանած ռուսներին եկեղեցիք, վանքերը և դպրոցները, աւատրիական—լեհական կառավարութիւնը ճնշում և հալածում է նրանց լեզուն և գրականութիւնը:

— Փրանսիական լուսաւորութեան նախարարը դիմել է մի շրջաբերական յայտարարութեամբ բոլոր ֆրանսիական թեմակալ առաջնորդներին և կարգադրել, որ նրանք այլ ևս թող չը տան որ և է ժողով գումարելու եկեղեցական շէնքերում: հոգեւոր դպրոցներում և առաջնորդարաններում:

— 1887 թուականի եկեղեցական նախահաշիւը Փրանսիայի հասնում է 44,327,753 ֆրանկի, որ այս տարուանից 805,100 ֆրանկ պակաս է: Նախարարութիւնն հետ զհետեւ պակասացնում է եկեղեցուն տուած նպաստներն:

— Տրիէնտի հակամասնական ժողովը, որ կաղմել էին կաթողիկները մասունականութեան դէմ կոուելու նպատակով ունեցաւ մի խայտառակ վերջարան: Դեռ նոր էին պատրաստութիւններ տեսնում այդ ժողովի համար, երբ 1893, 1894 թ. լոյս տեսաւ Փարիզում մի հաստափոր գիրք Le diable au XIX Siècle (սատանան թիւ. դարում) որի նպատակն էր կոուել սատանայապաշտութեան և մասունականութեան դէմ: Սրա հեղինակն էր զոկտոր Բատայի, որ ունեցել է և իւր աշխատակիցները: Այս գիրքը գործ էր որոշ խմբակի, որ յոյս ուներ մեծ դրամ աշխատել օգուտ քաղելով մարդոց դուրահաւանութիւնից և անմտութիւնից, Գիրքն առանձնապէս հետաքրքրական էր այնու, որ զոկտ. Բատային հաւատացնում է՝ թէ ինքը երկար տարիներ մասոնների ընկերութեան անդամ է եղել և գիտէ նրանց գաղտնիքներն, մանաւանդ սատանային երկրպագելու մասին նորանոր տեղեկութիւններ է տալիս: Գրքի հետաքրքրական ռաժիկներից մէկն էլ այն խոստովանութիւնն էր, որ հրատարակուած էր օրիորդ Գիանա Վոգհանի մասին, որ իբրեւ թէ Ազմոգէ գեկն նուիրուած է եղել և ապա թողել է մասունականութիւնն և դիմել կաթողիկութեան: Տրիէնտինեան ժողովում այս նորութիւնները քննելու համար մինչև իսկ մի մասնաժողով էր կարգուել:

Այժմ երբ կաթողիկ ժողովն այսպէս զոհ է եղել իւր թեթեւամտութեան և առեւտրական դիտմամբ հրատարակուած մի խորդալիս հրատարակութեան, մեծ վեճ է ծագել կաթողիկ և աղատամիտ մամուլի մէջ, որովհետեւ կաթողիկ թերթերից շատերը զեռ հաւատ են ընծայում այդ հրատարակութեան և համոզուած են, որ մասոնները սատանայ են պաշտում:

Վերջին ժամանակներս եւրոպական մամուլի մէջ սատանայի և սատանայապաշտութեան մասին աւելի խօսուեցաւ, քան թէ նոյն իսկ Աստուծոյ մասին: Հետաքրքրականն այն է, որ մի քանի կաթողիկ թերթեր զեռ հաւատում են մասոնների սատանայապաշտութեան և մեծ գովասանքով են խօսում դոկտոր Բատայի գրքի մասին: Անաչառ քննադատներ այդ գործը սովորական մի խորդալիսութիւն են համարում, ջերմ կաթողիկներն այդ գործը վերագրում են մասոններին, որոնք կամեցել են ծագրել կաթողիկների դիւրահաւանութիւնը. ամենից հետաքրքրականն սակայն այն է, որ ոմանք պնդում են, թէ այդ գիրքը նոյն իսկ յիսուսեանների գործ է և օրիորդ Վոգհանը կեղծ անուն է մի կաթողիկ

կրօնաւորի Սակայն ի՛նչ կայ զարմանալու չէ որ նպատակն արդարացնում է միջոցը:

— Սեպտեմբերի սկզբին Ֆինզոլէում տեղի ունեցաւ իտալական կաթողիկոսների 14- համաժողովը: Ժողովը վճռեց զիմել կառավարութեան և խնդրել, որ ուսման վրայից բարձուի վարչական հսկողութիւնն և դպրոցներն ազատ լինին (որով քահանայից հսկողութեան տակ եղած դպրոցները կազատուեն կառավարութեան խիստ հսկողութիւնից): Նոյն ժողովը վճռեց պատգամաւորաց ժողովին զիմել, որ օրէնք հաստատուի կրօնի դաստաւութիւնը միայն քահանայից յանձնելու և դպրոցներում միայն եկեղեցական տոները տօնելու համար: Անշուշտ այդ դիմումները անհետեանք կը մնան, սակայն դրանք նշանաւոր են կաթողիկէ կղերի պարտաճանաչութեան և անշեղի ուղղութեան:

— Իտալիայի Վերոնա քաղաքում ընկերականները (սոցիալական) պահանջցին, որ դպրոցներում փոխանակ քրիստոնէական շաշկերտների ձեռքը արուի և աւետարանը սակայն հոգևորականութիւնը մերժեց այդ խնդիրն: առարկելով՝ որ «աւետարանը—վտանգաւոր է»:

— Բողոքականութեան մայր երկրներից մէկը՝ Զուիցերլանդ կրկին նուաճուում է պապականներից, բողոքական թերթերի զրելով՝ այսօր բոլոր այն զուիցերական քաղաքներում և գիւղերում ուր առաջ ոչ մի կաթողիկէ չը կար, ամբողջ համայնքներ կան իրենց եկեղեցիով ու քահանաներով:

— Եւրոպական թերթերի թղթակիցներից մէկը տեսութեան է գնացել Պ. Պոլսում գերապատիւ Աղարեան պատրիարքին և նրա կարծիքն է հարցրել հայկական խնդրի մասին: Գերապայծառ հաճել է խոստովանել հայերի գոթախոտութիւնները, բայց նա այդ վերագրել է 1862 թուի սահմանադրութեան: Աղարեանը իւր ժամանակին մատնանիչ է արել այդ վտանգաւոր քայլի վրայ, բայց նրան չեն լսել: Պահանադրութեան համար նա ասումէ. «գա մի երեսօտի օտնէրին հագցրած մեծ ու ահագին կօշիկներ էին, որ անպատճառ պիտի վաճար ընկնէին»: Նուրեան էֆենդու դափնիք հանդիստ չեն տուել տաճիկ կաթողիկոսների (ինչպէս Աղարեան այժմ իւր հօտը կոչումէ) պետին:

2. ՕՐԹՈՂՈՔՍ ԵՎ ԵՂԵՑԻ.

ՇԼՆԻՆԻՆԻՆ ԵՎ ՆԵՐՍԻՆ.

— Հելլեն եկեղեցու պետի Թմոն ահա մի տարի կայ որ թափուր է արդէն ինչպէս հաղորդում են լրագիրներն: Աթէնքի եպիսկոպոսական լաթոսի համար յաջորդ է ընտրուած Պրոկոպիոս

վարդապետ Իկոնովիզիս: որ ցարդ աստուածաբանութեան ուսուցչապետ էր համալսարանում և կրօնուսոյց արքայորդաց:

— Հելլենական թաղաւորութեան գիտնական եկեղեցականներից նշանաւոր Նիկիփոր Այուդերաս արքեպիսկոպոսը վախճանուել է Սպեցիա կղզում:

— Աթէնքի սինօդը մի խրատական շրջաբերական է հրատարակել ամբողջ յոյն ազգին ուղղուած: որին յաջորդում է սուրբ պահել կիրաւէն: Այս շրջաբերականի հրատարակման առիթ է տուել Յունաստանում վերջերս տարածուած կիւրակնօրեայ հանգստութեան վերանայը: Հելլենական սինօդը երկարօրէն բացադրում է կիրակէի սրբութեան պատճառներ և յորդորում է կիրակէ օրերը ժամ գնալ, հոգեշահ գրքեր կարդալ և բրիստոնէական զրոյցներ անել:

«Յերկ. Աւետ.» առաջ է բերում այդ շրջաբերականի բովանդակութիւնն և աւելացնում, որ այդ նոյն խրատներին կարօտ է և ուսու ժողովուրդը: Իրրե օրինակ կիրակէի սուրբ պահելուն կարող են ծառայել Անգլիան և Հիւս. Ամերիկան: Վերջին ժամանակներս Գերմանիայում ևս կիրակէի պահպանութեան կանոններն համաձայն քաղաքներում խանութները պէտք է փակուին ժամը 10—12 — պատարագի ժամանակ—և ապա ժամը 2-ից սկսած մինչև միւս օրը: Այս օրէնքից բացառութիւն են կազմում պարէնեղին խանութներն ու ճաշարանները:

ՏՈՒՆԻՍԻԱՆ ՊԵՏՐՈՒՆԵՐԻՆ.

— Պ. Պոլսի պատրիարքական սինօդը շուտով պէտք է զրադուի Ռումանիոյ Գեննադիոս պատրիարքի գահափոխութեան խնդրով: Մեր ընթերցողներն յիշումեն, որ Գեննադիոսին Ռումանիոյ սինօդը գահափոխ արաւ նախարարութեան յորդորանքով: Այս ռախի գործողութիւնը մեծ զայրոյթ յարուց կրկին մէջ, ուստի գործին օրինակութեան ձև տալու համար նախարարութիւնը զիմել է տիեզերական պատրիարքութեան սինօդին: Հետքերական է յունական սինօդի վճիռն, որի մասին սկզբից կասկածելու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ նախարարութիւնն է այդ քայլն անողը: Գեննադիոսն ինքը պատգամաւորների ժողովի դատաստանին էր զիմել:

ՌՈՒՄԵՆ ԵՎ ՆԵՐՍԻՆ.

— Հոկտեմբերի 13-ին Տիւր քաղաքում վախճանուել է սուրբ ժամանակակից եկեղեցականներից իւր գիտութեամբ նշանաւոր եպիսկոպոսներից մէկը՝ Տիւրի արքեպիսկոպոս Սաբա [CABA], Նա ծնուել էր 1819 թուին և կրօնական

փիճակն էր մտել 1850 թուին, Հանգուցեալն յայտնի է իւր բանասիրական, հնագիտական և եկեղեցական—պատմական շարադրութիւններով: Մոսկուայի սինոդական (հին պատրիարքական) թանգարանի և գրոտան գիտնական ցուցակը նրա գործն է, որ ցարդ իւր նշանակութիւնը չէ կորցրել, նոյն գրատեղից նա հրատարակել է ուսուցիչ եկեղ. պատմութեան վերաբերեալ մի քանի նշանաւոր վաւերագրեր, Հանգուցեալը թողել է հարուստ մատենադարան (8607 հատոր), որ կտակով աւանդել է Մոսկուայի հոգեւոր ձեմարանին:

— Հնգկաստանի սովը առիթ է տուել Ս. Պետերբուրգի մի քանի մեծ թերթերի ստորագրութեան բանալու յօգուտ սովեալ հնգիկների, Այդ հանգամանկութեան ձայնակցել են ուսուցիչ եկեղեցու երկու նշանաւոր առաջնորդները: Ֆինլանդիայի Անտոնիոս արքեպիսկոպոսն և Մոսկուայի Սերգէյ եպիսկոպոսն, որոնք իրենց կողմից նուէրներ են հաւաքում յօգուտ հնգիկ ժողովրդեան:

— Օրիէնբուրգի առաջնորդ Նիկոլայ եպիսկոպոսը վախճանուել է 29-ին հոկտեմբերի:

— Վերջին ժամանակներս ուսւ հերձուածող հնադաւանները սկսել են աւելի վստահութեամբ վերաբերուել դէպի «պրաւոսլաւնի» եկեղեցին ու եկեղեցականները: Այդ երևոյթը մեծ ուրախութիւն է պատճառում ուսւ եկեղեցական թերթերին, որոնք յոյս ունեն իրենց կողմը գրաւելու այդ հերձուածողներին:

— Ռոնի փիճակում ամենից շատ են հերձուածողներն, որոնց քարոզելու համար այնտեղ կան արդէն 27 քարոզիչ: Այս տարի հոկտ. 1-ին բացուեցաւ այնտեղ մի քարոզչական դպրոց ևս, որից աւարտողները պիտի հերձուածողների մէջ քարոզութիւն անեն: Այդ դպրոցում աշակերտում են 15 հոգի: 10 փիճակային արգիւնքներից թողակ են ստանում իսկ 5 իրենց ծախքով են ուսանում:

— Ռուսաց մամուլի մէջ գանգատներ են լսուում եկեղեցիների սակաւութեան դէմ: Ինչպէս 1894 թ. փիճակագրութիւններից երևում է 74 միլիոն «պրաւոսլաւնի» ուսւ աղգարանութեան համար Ռուսիայում կան 46,054 եկեղեցիք, որից հետևում է՝ թէ 1,600 հաւատացեալի համար կայ մի եկեղեցի և մի եկեղեցի գոյութիւն ունի 428 քառ. վերստի վերայ, նահանգների մէջ շատ անհաւասար է եկեղեցիների թիւը, կայ նահանգ, ուր եկեղեցիք խիտ առ խիտ են և կայ այնպիսին, ուր եկեղեցիք շատ հեռու են միմեանցից: Ամենից քիչ եկեղեցիք կան Սիբիրում, որի վեց թեմերն ունեն 1,647 եկեղեցի, այսինքն՝ 3,700 հոգի մի եկեղեցի ունեն, որ 5,732 քառ. վերստ տարածութեան համար է:

— Ռուսաց հոգեւոր դպրանոցների մէջ պիտի

ուսուցանուեն այսուհետեւ տարրական բժշկութիւն և գիւղատնտեսութիւն, որպէս զի քահանայացուք կարող լինեն իրենց ապագայ գործունէութեան համար կարեւոր գիտելիքներ ձեռք բերել: Պարբերական թերթերից մէկն ևս առաջարկում է իրաւարանութեան ուսուցումը մտցնել հոգեւոր դպրոցներում: որպէս զի ապագայ քահանայք գիւղացիներին աղատեն գիւղական գրագիրների և գինեւորների փաստարանների ձեռքից: Շատ նպատակների դիմողը վրիպում է իւր զխաւոր նպատակից, քահանայացուներին բժիշկ—գիւղատնտես—իրաւարան դարձնել ցանկանալով փայլել քահանայ էլ չը կարողանան դարձնել:

— Ռուսաց սեմինարիստներին (հոգեւոր դպրոցի աշակերտներին) համալսարան ընդունելու դէպքերն այս տարի այնքան շատացել են, որ կարծուում է՝ թէ շուտով այդ արտոնութիւնը օրէնք կը դառնայ: Միայն օգոստոսի ընթացքում Վաղանի և Իւրեի համալսարաններում ընդունուած են 65 ուսանող, դեռ յայտնի չէ միւս համալսարաններում ընդունուածների թիւը:

— Վոլոգդի փիճակային դպրոցների խորհուրդը արգելել է աշակերտներին ծուռ չափերնել, որ դեռ ևս գոյութիւն ունի ուսուցիչ ստորին դպրոցներում: Այս արգելքը պատճառաբանուած է ի միջի այլոց և այնու, որ պատժուած աշակերտի մէջ մեռնում է Աստուծոյ առաջ ծուռ խոնարհելու զգացումն:

ԱՅԿԱՆՈՒՄ ԵՎԶԵՅՈՒ

Հոկտեմբերի սկզբին Անգլիայի Շրիւսբրի քաղաքում տեղի ունեցաւ տարեկան «եկեղեցական համաժողովն» ներկայ եղողների թիւն երեք հազարից անց էր, որոնց մէջ կային եկեղեցականներ, գիտնականներ, հասարակական գործիչներ և հրապարակախօսներ: Այս ժողովում քննուեցան բազմաթիւ խնդիրներ ինչպէս՝ դպրոցական, եկեղեցական, բարոյական, տնտեսական ևն. ամենից աւելի խօսուեցաւ անգլիկան եկեղեցականութեան ձեռնադրութեան և դրա վերաբերմամբ պապի վերջին կոնդակի մասին և եկեղեցիների աղգայնութեան մասին, Համաժողովի ճառախօսներից մին շէնրի Վեկմէն խօսելով արեւմտեան քրիստոնէական փիճակի մասին, ասաց, վերջին յիսուն տարուան ընթացքում արեւմտեան քրիստոնէից մէջ երկու շարժումն է նկատուում: դրանցից մէկն է իշխանութեան կենդրոնացում լատին եկեղեցու մէջ, այսօր Լեոն ԺԳ. Լուգովիկոս ԺԳ. ի պէս կարող է ասել «եկեղեցին»—«ես եմ»: Երկրորդ շարժումն է աղգային եկեղեցիների կենդանանալը, Եթէ հնաւոր է այժմեանից իսկ գուշակութիւններ անել, այն ժամանակ մենք կարող ենք երեք բան գուշա-

կէլ, որոնք բղխում են մարդկային բնութիւնից և կրօնից, նախ՝ ամենայն նշաններից երևում է որ Քրիստոսի տիեզերական եկեղեցին առաջուան պէս պիտի կրկին մեծ գործն հանգիստնայ քաղաքակրթութեան և աշխարհիս բարոյական կառավարութեան մէջ, Յիկեղեցական եկեղեցին այս նպատակին կը հասնէ ընտրութիւն անելով հոռի մէտական միապետական եկեղեցու և ազգային եկեղեցիների մէջ մի վերջնական միութիւն ստեղծելով: Անկախ եկեղեցիների դաշնակցութեան ձևն ընդունուած է արդէն անգլո-սաքսոնական և սլաւոնական ազգերի մէջ, ուստի և ապագան նրանցն է:

Անգլիկան եկեղեցականները մի յենակէտ են որոնում և չեն գտնում ուստի ամեն ոք իւր երեւակայութեան շնորհիւ մի *modus vivendi* է հնարում այժմեան վիճակի անբնական լինելն արտայայտելու համար:

— Անգլիկան եկեղեցու նոր պետի հաստատութեան առթիւ լրագիրները թուում այն են ծախքերը որ նորընտիր պրիմասը պէտք է անէ: Այդ ծախքերն հասնում են մինչև 10,000 ուրլու, սակայն աչքի առաջ ունենալով՝ որ Քենտրբըրրի արքեպիսկոպոսի տարեկան արդիւնքն է 150,000 ուրլի, հասկանալի է, որ հաստատութեան համար նրա ծախսած 10,000 ուրլին չնչին գումար է:

Թէ ինչքան աւանդապա՛հ են անգլիացիք, երեւում է նոյն իսկ վերոյիշեալ ծախքերից. նորընտիր արքեպիսկոպոսը 600 ուրլու չափ պիտի վճարէ ներքին գործոց նախարարութեան ընտրութեան արձակուրդի՝ համար. նոյն իրաւունքի համար պալատական նախարարութեան պիտի վճարէ 700 ուրլի, թագաւորական հաստատութեան համար 77 ֆունտ ստ. 27 շիլ. 6 պ. (780 ու. չափ), իսկ արքեպիսկոպոսութեան արդիւնքների իւր վերայ հաստատելու համար պիտի վճարէ 1000 ուրլուց աւելի: Բացի այս ծախքերից արքեպիսկոպոսը պարտաւոր է որոշ պարգևներ տալ նախարարին, պալատական և ին պաշտօնականներին:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

— Բեռլինում կատարուած մի սպանութեան մեծ յուզումն է ձգել Գերմանիայում: Իրաւաբանական խորհրդական՝ Լեւին սպանուել է պատանի չարագործների ձեռքով: Այս չարագործութիւնը բաց է արել Գերմանական մամուլի աչքերը, որոնք այժմ շատ են խօսում «երիտասարդութեան» անսանձութեան և վայրենութեան մասին: Այս գեպից առիթ առնելով եկեղեցական թերթերն յարձակում են ազատամիտ ուղղութեան վրայ, որի շնորհիւ կրօնն ու եկեղեցականութիւնը հետզհետէ

զրկուել է զարոցների վրայ ազդեցութիւն գործելու իրաւունքից:

— Յայտնի է թէ Պրուսիայում և առ հասարակ Գերմանիայում ինչպիսի հակակրօնեամբ վերաբերուեցան դէպի հայերի դատր, Գտնուեցան արդարեւ քրիստոնեայ և մարդասէր անձինք, որոնք բողոքեցին այդ ընթացքի դէմ, սակայն նրանք հետզհետէ կրեցին կառավարութեան հալածանքները: Այսպէս հայկական սպանութիւնները ստուգող և հրատարակող գոխոր Լէպսիւսը ստիպուեցաւ թողնել իւր տասն տարի հոգուած հօտը, որովհետեւ նրան զլացան 6 ամիս արձակուրդ տալու, որ գործէ յօգուտ հայոց, Հայազգի բողոքական Թուրմայենցին ոստիկանութեամբ հեռացրին Պրուսիայից և ապա լրագիրների մէջ յեղափոխական և ուխտադրութ հռչակեցին, սակայն նրան պաշտպանութեան ելաւ պատուոր Հոֆֆմանն և հերքեց զըրպարտութիւններն, Եկեղեցական մամուլի մէջ «Chr. Welt» թերթին է պատկանում հայկական դատի առաջին պաշտպանի գերը, որի վերջին համարում պրոֆ. Գելցերը մի զօրաւոր պաշտպանողական է գրել հայոց համար: Անբարենմիտ թերթերը չը բաշուեցան իսկ հրատարակելու, որ յօգուտ հայոց եղած նպաստները կորչում են և կամ հայ յեղափոխականների ձեռքն են ընկնում: Այս առթիւ նրանք չեն զլացել նոյն իսկ հրատարակելու, որ Հայոց Հայրապետն անգամ մերժում է (?) նուէրներ ընդունել յօգուտ Հայոց, Խեղճ գերմանացիք, որ թուրքերն էլ կարողանում են ձեռ խաբել:

— Բրուսայում հիմնուել է հայ որբերի համար մի ապաստանարան, այդ հիմնարկութեան գլուխն է Լ. Բաղդասարեան, որի հրատարակած հրաւերից երևում է, որ հայ որբերի թիւն հասնում է 40,000: Առ այժմ Բրուսայի որբանոցում ապաստանարան են գտել 97 հոգի, որոց պիտի աւելանան և 16 այլ որբեր, որ Ամասիոյ հայոց առաջնորդն է ուղարկելու: Լ. Բաղդասարեանի հրաւերի մէջ ասուած է. երբ թուրք կառապանը որբերին բերաւ որբանոց, ասում էր. «այս մանուկները կը մեծանան այստեղ, բայց ինչօգուտ, չէ՞ որ դրանց էլ պէտք է կոտորենք»: Յօգուտ Բրուսայի որբանոցի նուէրներ են ընդունում Բազլի քարոզական ընկերութեան վարչութիւնն Բազելում և Բադենում: Լ. Բաղդասարեանին ուղարկուած նուէրները պէտք է ապահովացրած լինեն:

Ն. Զ.